

# 39. ԽԵԼՔՈՎ ԽԱՐՍ ՈՒ ԴՈԼՎԱԹ

Ավուր մեկ մե շատ խարուստ մարդ կէղի, էդ մարդ շատ պատվով կէղի. մըտ քրդի, մըտ հայի, մըտ թուրքի պատիվ կէղի էդոր, էդ մարդու տըսերկու տղա կէղի, էդ տղեկներ յարամազ կէղին:

Մարդ կը տեսի օր էդ տղեկներ ուր տուն պտի ավիրեն, իմալ պտի ավիրեն մեկ՝ գողուութենով, մեկ՝ բոզուութենով, մեկ՝ ճան խաղելով, մեկ՝ թուղթ խաղելով, մեկ՝ մարդ սպանելով:

Էդմլա մարդ տեսավ որ ուր տուն պտի ավիրի, «Հեռենամ, - ասաց, - օր չտեսիմ իմ տան ավիրուութեն»:

Առավ խըտ ուր 200-300 ոսկի, թողեց ուր խարստուութեն տղեկներուն. Աստծու հառեջ ահտ ու շառթ էնեց. «Քյառսուն ավուր ճամբախ պտի էրթամ օր իմ տղեկներ իմ տուն ավիրեն, ձեն չգյա ընկի իմ հականջ»: Գնաց էդ մարդ, խասավ մե քաղաքի. ուր ձիու կեմ թողեց ձիու ղարփուզ, ասաց ձիուն. - Աստըծու հայվան, դու վի՛ դուռ էրթաս, ես էլ էն դուռ պտի իջիմ:

Ձին ա, գնաց-գնաց, քընց ինքն էլ խարուստ մարդու մը դուռ կայնավ:

Էդ մարդ էդ տեղ իջավ, ղանչեց. - Նանե՛, նանե՛, էս ձին քաշա իներս:

Ձին քաշեց ներս, խոտ տվեց, էդ կնիկ վերուց. - Ախպե՛ր, դու հորի՞ն դուռ կը կայնես, արե տուն, նստի:

Գնաց տուն, նստավ:

Էդ կնիկ վերուց. - Ախպե՛ր, դու բարի ես էկեր, վըր իմ գլխին, վըր իմ երեսին, էն տեղեն չում էստեղ:

- Աստված քու տղեկներ պախա, քու դոլվաթ շատ էնա, ինչ դու իմ պատիվ պախեցիր, Աստված քու պատիվ պախա, - ասաց:

էդ կնիկ խաց ու զատ բերեց, դնեց հառեջ. էդ մարդ կերավ:

էդ մարդ չանք հիրկուն ձեն չէնեց, սուս նստավ:

էդ կնկան իրիկ, ուր իրեք տղեն խետ, հիրկուն էկան, տանտեր կնկյան ասաց. - էլի խաց բի, ուտենք:

Կնիկ խաց բերեց, էդ տանտեր էդ մարդուն ասաց. - Ախպե՛ր, արի խա՛ց կեր:

Տանտերն էլ մարդուց չխարցուց. «Դու հո՞ւստ էկեր ես, դո՞ր կէրթաս, ի՞նչ բանի կէրթաս»:

Տանտեր վերուց, ուր աղջըկեն ասաց. - Աղջի՛, հէլի, տեղրանք թալ, պարկինք:

Տեղրանք էցգեց. ամենքը էլան պարկան:

էդ աղջիկ, իրա սովորութեն էր, փարչմ ջուր ուր խոր գլխու մոտ դնեց, մեմեկ փարչ էլ՝ աղբրտոց գլխու մոտ, մեկ էլ էն ղարիբ մարդու գլխու մոտ, պարկան, քնան:

Մնաց չանք լուսուն, էդա տանտեր էլավ, գնաց ուր բանին, էդ ղարիբ մարդ մնաց:

Մեկ ամիս, էրկու ամիս, մեկ տարի, էրկու տարի, չանք յոթ տարի էդ մարդ մնաց էդա տուն:

էդա տանտերն էր, էդա մարդուց մեկ բան չխարցուց:

Յոթ տարին օր թմավ, մարդու ճկեար կտրտավ, էլաց:

էդ տան կնիկ վերուց. - Քու դարտ ի՞նչ ա, կուլաս:

Ասաց. - Քուրիկ, իմ դարտ էն ա, էս յոթ տարի ա էկեր իմ քու տուն, քու մարդ չանք մկա չխարցուց. «Դու ինչ մարդ ես, հո՞ւստեն կուգյաս, դո՞ր կէրթաս»:

Մնաց չում հիրկուն, էդ տանտեր, ուր տղեկներ էկան, էդ տան կնիկ վերուց ուր մարդուն ասաց. - Մա՛րդ, էս մարդ յոթ տարի ա էկեր ա, սկի չխարցուս. «Մա՛րդ, դու ի՞նչ մարդ ես, հուստե՞ն ես»:

- Կնի՛կ, - ասաց տանտեր, - Աստված ընձիկ մալ շատ ա տվեր. էնոր ուտելու չխալըսիր, ձիուն ուտելով իմ խոտ չիխըսիր. քանի տարի կուգա թո մնա, ինքն էլ ուտա, ուր ձին էլ:

էն տան աղջիկն էր, էմլե տեղրանք թալեց, էմլե մեկ-մեկ փարչ ջուր լցեց, դրեց էդոնց գլխու մոտ:

Մնաց չում լուսուն, էդ մարդ էլման էլաց-արտսունք թափեց:

էդ տան կնիկ վերուց. - Մա՛րդ, մը վախենա, քու դարտ ի՞նչ ա, կուլաս:

Ասաց. - Քուրի՛կ, քեզնե ի՞նչ պախեմ, Աստծուց՝ ի՞նչ, ես քընց քե խարուստ, իմ տուն քընց քո տուն աղեկ, իմ մալ քընց քուն շատ, իմ տղեք քընց քուն շատ, իմ խետ յոթ խարիր օսկի բերեր ի, ձեր տան անուն ծանտր կիտեն, օր գի, քու աղջիկ ուզի իմ տղին: Մկա էկեր իմ, քու մարդ չխարցու. փարեն էլ խլըսեր ա, տուն էլ քառասուն ավուր ճամբախ զատանց ա, մեկ էլ չկյառնամ էրթամ, գյամ:

- Ախպե՛ր, - ասաց կնիկ, - առ քե քսան խինգ քիսա փարա մեկ, մ'էրթա քո տուն, խինք խատ էլ խալաթ:

Մնաց չում հիրկուն, մարդ ու ուր տղեկներ էկան:

Կնիկ վերուց. - Մա՛րդ, էդ մարդուց խարցուր, հո՞րի էկեր ա. մեկ տես, քու ճուղաբ ի՞նչ կուտա:

Էն մարդ վերուց. - Ես էկեր իմ, քու աղջիկ պտի տաս իմ տղին:

Տան տեր վերուց. - Քսանը խինգ քիսա, խինգ խալաթ կուտաս, իմ աղջիկ կուտամ, տասը փարա պակաս էղի, չառիմ, ավելի էլ էղի չառիմ:

Էդ մարդ վերուց. - Խնամի՛, հէլի, քու աղջկե ձեռ ու ոտ տես, լուսուն ես կէրթամ:

- Խնամի՛, - ասաց, - իրեք օր մոհլաթ տաս, պատրաստութեն տեսիմ, առ, գնա:

Իրեք օր որ թմավ, աղջկե խեր քառսուն ջորու բեռ բռնեց ուր աղջկեն ջհեզ, էլավ ուր իրեք տղեք ու եռսունը ինը մարդ դրեց խետ. - Դմբով, զուռնով տարեք իմ աղջիկ, իրեք օր ճամբախ դրեք, դարձեք. թը իրենք էրթան:

Իրեք օր որ թմավ, էլավ էդ աղջիկ իրեք աղբոր խալաթ տվեց: Մնացին էդ աղջիկն ու կեսերը, մեկ էլ եռսուն ինը մարդ: Եռսունը յոթը օր ճամբախ գյացին:

Էդ եռսուն յոթ օր էդ մարդ խաղ ասելեն, ձի խաղցնելեն կէրթար, չում էկան, խասան ուրանց խոդին:

Որ խասան ուրանց խոդին, էս մարդու ճկյար վառավ, սիրտ մրմրաց, լեզուն առվավ:

Էդ խարս մեզեց, ասաց. «Ճանըմ, էսոր ձի խաղցնել դո՞ր, խա՛ղ ասել դո՞ր, մկա լեզուն առվեր ա»:

Մեկ սահաթ, էրկու սահաթ էդմալ լալելեն ճամբախ գնաց:

Էդ խարս ուր մտքի մեջ վերուց. «Մեկ ես իմ, մե՛կ վերին դեն Աստված. մեկ իմ կեսրեր. իսանին զաթի իրեք փարդա ա, իմ մեկ փարդեն պտի պատռեմ, տեսիմ, էսոր դարտն ի՞նչ ա, օր վառվի, կիրիցի»:

Էդա խարս վերուց մեկ փարդեն պատռեց, ասաց. - Ափո՛, քու դարտ ի՞նչ ա, յան կասես, յան կը զանիմ, ընձի կը սպանիմ:

Էդ մարդ վերուց. - Որդի՛, իմ դարտ շատ ա, ես իմալ քե ասեմ:

- Թո՛ շատ էղի, պտի ասես:

Էդ մարդ ասաց. - Իմ տուն քընց քու խոր տուն շա՛տ աղեկ ա, ես քընց քու խեր պատվով, երևելի. որդի՛, ընձի տասվերկու տղա կա, տեսա օր մեկը գողուքեն կէներ, մեկը բոզուքեն կէներ... թորկի տնեն փախա ընդոնց հապով, մկա կը մեզեմ, ընկա քու մեղաց տակ. չեմ գիտեր, քզի տանեմ իմ ո՞ր մեկ տղին տամ, որդի՛, իմ դարտ կո՛ էդ ա, - ասաց:

- Ափո, - ասաց, - իսկի ղասաֆեթ մ'էնի, իսկի տղա էլ թո չէղի. ես քե տղա, դու ձիկ խեր:

Սահաթմ, էրկու, իրեք, չորս խասավ ուրանց գեղ:

Խարս տեսավ խերն էլման կուլա, կը վառի, կիրիցի:

- Ափո՛, հորի՞ն կուլաս, - ասաց:

- Որդի՛, - ասաց, - ի՞մալ չլամ. տունն օր կա Աստուծո սթարն ա, տո՛ւն էլ չկա, թու ավիրեր ա:

- Ափո՛, մի՛ լար, Աստված օղորմած ա, հալպաթ խարապա կա, մեր բան ու ման թալենք մըջ խարապին:

Ուրանց բարխանեն թալեցին ուրանց խարապեն:

Մարդ տեսավ ուր բարեկմներ, ուր չարկամներ ժողվան, էկան է՛դոր կուշտ:

Տեսավ ինչ որ բարեկամ էր, տրտում էր, ինչ որ չարկամ էր, մեկ աղլ կը զրուցեր, մեկ չաղըլ կը զրուցեր, մեկ աղեկ կը զրուցեր, մեկ մոն:

Էդ խարս մեզեց. իմ հերսին էրկու փարդեն պատռեցի, էն մեկն էլ կը պատռեմ, ասաց. - Ափո՛, էդոնց փարա կա՞ մըր վրեն, փարեն տանք, մալ կա՞, մալ տանք:

Էդ խարս էդ խսեն ասաց, ամեկը քաշվան, գյանցին:

Էդ խարս, ուր կեսրեր մեքի մացին, խարս վերուց. - Ափո՛, առ էսա չորս օսկին, գնա, մշակ, բահ-բան բեր, ես փորիմ, դու լից, մշակներ կրեն, մեր տներ շիքինք:

Գնաց, առավ էկավ:

Մեկ օր, շաբաթմ, ամիսմ, էրկու ամիս ուրանց տներ շքեցին, պրծան. ուրանց բարխանեն լցին ուրանց տուն:

Խարս տվեց էրկու օսկի:

- Ափո՛, - ասաց, - գնա, մեկ օխչար, էրկու լիտր արաղ ա՛ռ, արի՛:

Գնաց, բերեց. խարս էփեց, պատրաստեց, ասաց. - Ափո՛, քու տղեկներ մշակ ին, գնա՛, քու տղեկներու աղեք ղանչա, բեր. օր կուգյան, խաց կուտին կը պրծնին, կասեն քե. «Մեզի հորի՞ն կանչեցիր», դուն էլ կասես. «Տղեկներու իզին տաք, գիշերս գյան, մեր տուն մնան, լուսուն գնան ուրանց բանին»:

Էդ մարդ խարսի ասածի պես էնեց, տղեկներ թորկին աղեք, էկան ուրանց խոր կուշտ. հեմալ ամոտ-զամոտ, օճլոտ-պճլոտ, քրճոտ-պնճոտ: Էսոնք էլ կերան, խմեցին:

Խարսն էր, տըսվերկու ձեռք յաթախ ջոկ-ջոկ թալեց, ամեկ յաթաղի գլոխ փարչմ ջուր դրեց: Տղեք էլան քնան:

Տղեկներ որ քնան, խարսն վերուց. - Ափո՛, կես գիշեր օ կէղի, պոռա. «Տղեկներ, ես ծարավ վառվա, մեռա, իրիցա, ջուր բերեք ինձի»: Տես որ մեկ տղեն կը բերա, դու ընձի պսակա վըր էնդոր:

Տսվերկուսի պզտիկ՝ պոռալու բաշտան փարչ վերուց, բերեց, տվեց ուր խոր ձեռ:

Աղջիկ ասաց. - Ափո՛, ընձի պսակա վըր էդոր. մեկելներու իզին տուր, էրթան ուրանց բանին, մեզի պետք չեն:

Էդ մարդն էր, բերեց դմբով, զուռնով, նաղարով էդ խարս պսակեց ուր տղի վրեն, էղան մե աղեկ տուն:

Էդ խարսն ա, գիշեր, ցերեկ ուր Աստված կը ղանչա, ուր աղոթք կէնա, ուր մարդու ծոցն էլ չպառկի, չում Սուրբ Աարգսի բքուն:

Աուրբ Աարգսի բքուն էր, կեսրեր էնդեխ էր պարկեր, տղեն էսդեխ, խարսն էլ չոքեր էր, աղոթք կէներ:

Կես գիշեր էր, խալիվորմ էնենց զարկվավ դուռ, հէմալ պոռաց, էրկինք-գետին ձեն տվեց:

Խարս վերուց. - էն ո՞ն ա զարկվավ մեր դուռ:

- Խա՛րս, - ասաց խալիվոր, - Աստված կը սիրես, դուռ բա՛ց, ընձի առ ներս, բուք ընձի խեղդեց, ծեր մարդ իմ, իմ աչիչ լուս պակաս ա:

Խարս դուռ չբացեց, չառավ ներս, մնաց բքու հառեջ:

- Խա՛րս, - ասաց, - էն կապուտ չատր կը սիրես, խեղճ իմ, խոքի ա, կազատես:

- Դու ի՞նչ մարդ ես, քու անուն ինչ ա, ընձի ասա՛:

- Ես քու դոլվաթն իմ, դուռ բա՛ց, ընձի առ ներս:

Խարս ասաց. - Դոլվաթ չէղի, Աստված էլ էղի, դուռ չբանամ:

- Որդի՛, դուռ բաց, ընձի առ ներս. մեկ էլ Հուսենի թոպեն կէնեմ, քու տնեն չէլլիմ դուս. քանի քու սըլսըլեն սաղ ա, քու յոթ պորտ կա, նամերտի մուհթաճ չէղիք:

Էլավ խարս դուռ բացեց, էդ մարդ առավ ներս:

Էդ դոլվաթն էր, ասաց. - Որդի՛, գնա՛ ճրագ կպու, էրթանք փակախի վերին դեն սաքում կա, քեզի էրկու խապար կա, քե կասեմ, էլ քու աչիչ չէրևամ, կը խամբարձիմ:

Խարս գնաց, ճրագ կպուց, առավ էկավ, գնացին փակխի վերին սաքուն. հինք ու դոլվաթ նստան. դոլվաթ վերուց. - էս գոմշու սալ կը տեսի՞ս:

- Խա՛, կը տեսիմ, - ասաց:

Ասաց. - էս սալի տակ էրկու գումգում օսկի կա, խանեք, տարեք. ծի տղեկներ կարգեք. տղեկներ ուրանց մեղաց դարձան. ուրանց գոգեն քար թափին էն մեկ գումգումն էլ ծի պետք կուգյա, հա՛ թը կենա էդ տեղ:

Էդոնք ասաց, պրծավ, դոլվաթ էլ չերևաց:

Խարս առավ ճրագ, էկավ ուր տուն, աղոթք էնեց չում բարի լուս բացվավ:

Էդոր մարդ ու կեսրերն քնուց հէլան վեր. ուր մարդն էր՝ գնաց բանելու, կեսրեր մնաց տուն:

Խարսն էր, վերուց, կեսրերին ասաց. - Ափո՛, էսօր գիշեր մեր դոլվաթ էկավ տուն, ինձի ասաց. «Ճրագ կպու, էրթանք փակխի քունչ, քչում նստինք». գյացինք քչում նստանք, ընձի ասաց. «էս գոմշու սալ կու տեսի՞ս», ասի. «Խա, կու տեսիմ», ասաց. «էս գոմշու սալի տակ էրկու գումգում օսկի կա, մեկ խանա տար, կերեք, տղեկներ կարգեք, ինչու որ տղեկներ քար ուրանց գոգեն թափած են. մեկ հատ թը մնա, օր պետք էկավ, կը խանեք, կուտեք»:

Փետատ, թիակ բերին, էն սալ շրջին. էրկու գումգում օսկի էլավ տկեն: Բերեցին մեկ գումգումը, ուրանց տղեկներ կարգեցին:

Ուրանց տղեկներ ուրենց գործեր թոպա էնեցին, ուրենց քար ուրենց գոգեն թափեցին:

Խարս ուր էրածներով էդ դոլվաթ գտավ: